



Մ ՈՒՐՐ Զ ԱԿՈՐ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ Ե ԿԵՂԵՅԻ



ԳԻՏ ՏՓՈՂ

14 ՅՈՒՆԻՍ 2019

Կիրակնօրեայ Ընթերցումներ	Էջ 1
Ծանուցումներ	Էջ 2

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ

(2.5-11)

Եւարդ, ո՛վ տուն Յակոբի, եկուր Տիրոջ լոյսովը քալենք: Որովհետեւ ահա Տէրը լքեց իր ժողովուրդը, Յակոբի տունը, քանի որ անոնք փղշտացիներուն պէս իրենց երկիրը կախարդներով լեցուցին առաջուան նման, եւ օտար ամուսնութիւններով խառնածին զաւակներ ծնան: Իրենց երկիրը ոսկիով ու արծաթով լեցուեցաւ, թիւ չունին իրենց գանձերը. իրենց երկիրը ձիերով լեցուեցաւ, հաշիւ չունին իրենց ռազմականքերը: Երկիրը ձեռագործ գարշելի չաստուածներով լեցուեցաւ. կ'երկրպագեն առարկաներու գորս իրենց մատներով շինեցին: Նուաստացաւ մարդ արարածը, ո՛րքան ստորնացաւ մարդը. մի՛ ներեր անոր, Տէ՛ր: Արդ, գացէք ժայռերու տակ ծածկուեցէք կամ ապաստանարանները մտէք, Տիրոջ ահարկու ներկայութենէն եւ անոր փառաւոր զօրութենէն փախչելու համար, երբոր անիկա գայ երկիրը հարուածելու: Որովհետեւ հիմա Տէրը իր բարձունքէն կը նայի մարդոց խեղճութեան վրայ. բայց այն օրը մարդոց ամբարտաւանութիւնը պիտի խոնարհի եւ միայն Տէրը ի՛նք պիտի բարձրանայ:

... եկուր Տիրոջ լոյսովը քալենք:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ՀՌՈՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ
ՆԱՄԱԿԷՆ
(9.30-10.4)

Հեթանոսներ, որոնք Աստուծոյ արդարութեան չէին հետեւեր՝ արդարացան, որովհետեւ Քրիստոսի հաւատացին. մինչդեռ Իսրայէլի ժողովուրդը չարդարացաւ Մովսէսի Օրէնքին միջոցաւ, որ տրուած էր մարդիկը արդարացնելու համար: Ինչո՞ւ: Որովհետեւ չհաւատաց Քրիստոսի, եւ կը կարծէր թէ Օրէնքին գործադրութեամբը պիտի արդարանայ: Ատիկա իսկ պատճառ եղաւ որ գլորին՝ «գայթակղութեան առիթ հանդիսացող քար՝ ին վրայ, այսինքն՝ Քրիստոսի, որուն համար մարգարէութեան մէջ գրուած է. «Ահա ես Սիոնի մէջ կը դնեմ քար մը որ գլորումի առիթ պիտի ըլլայ, ժայռ մը՝ որ գայթակղութեան առիթ պիտի հանդիսանայ: Բայց անոր հաւատացողը յուսախար պիտի չըլլայ»:

Եղբայրներ, սրտանց կը մաղթեմ եւ կ'աղօթեմ, որ Աստուած փրկէ Յակոբի տունը, որովհետեւ կրնամ անոր մասին վկայել, թէ Աստուծոյ հանդէպ նախանձախնդիր է. միայն թէ այդ նախանձախնդրութիւնը

Հեթանոսներ, որոնք Աստուծոյ արդարութեան չէին հետեւեր՝ արդարացան, որովհետեւ Քրիստոսի հաւատացին.

«Բայց անոր հաւատացողը յուսախար պիտի չըլլայ»:

...Քրիստոսով
Օրէնքը իր
լրումին
հասած է
եւ միայն
Քրիստոսի
հաւատացողը
կ'արդարանայ:

հիմնուած չէ՝ Աստուծոյ
ճշմարիտ ծանօթութեան
վրայ: Անիկա չհասկցաւ,
թէ Աստուած ի՞նչ ձեւով
կ'ուզէր արդարացնել
մարդիկը. արդարա-
նալու իր հասկցած
ձեւին կառչեցաւ
եւ ուստի չընդունեց

Աստուծոյ արդարութեան ուղին: Մինչդեռ
Քրիստոսով Օրէնքը իր լրումին հասած
է եւ միայն Քրիստոսի հաւատացողը
կ'արդարանայ:

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ
(13.24-30)**

Յիսուս ուրիշ առակ մըն ալ խօսեցաւ
անոնց եւ ըսաւ.

«Մարդ մը լաւ սերմեր ցանեց իր արտին
մէջ: Գիշեր մը, երբ ամէն մարդ քնացած
էր, անոր թշնամին եկաւ, որոմ ցանեց
ցորենին մէջ եւ գնաց: Երբ սերմերը
ածեցան եւ սկսան հասկ կազմել, այն ատեն
որոմն ալ երեւցաւ: Տանտիրոջ ծառաները
եկան եւ ըսին անոր. «Տէ՛ր, դուն միայն
լաւ սերմեր չցանեցի՞ր արտիդ մէջ.
ուրկէ՞ հապա որոմը»:

«Ասիկա թշնամիի գործ
է»:

«Ծառաները ըսին.
«Կ'ուզե՞ս որ երթանք
եւ որոմը քաղենք»:

«Ո՛չ,- պատասխանեց
տէրը,- որովհետեւ որոմը
քաղած ատեն կրնայ ըլլալ
որ ցորենն ալ միասին

արմատախիլ ընէք: Զգեցէք որ երկուքն ալ
միասին ածին մինչեւ հունձքի ժամանակ,
երբ հնձուորներուն կ'ըսեմ որ նախ որոմը
քաղեն, խուրձեր կազմեն այրելու համար,
եւ ապա քաղեն ցորենը եւ ամբարեն
շտեմարաններու մէջ»:

«Ահաւասիկ ճիշդ ասոր կը նմանի
երկինքի արքայութիւնը»:

Զգեցէ՛ք որ
երկուքն
ալ միասին
անին մինչեւ
հունձքի
ժամանակ...:

ՏՆՕՐՀՆԷՔ

Տնօրհնէք փափաքող ընտանիքները,
թող բարեհաճին դիմել
Տ. Գառնիկ Ա. Քհնյ. Գոյունեանի,
հեռաձայնելով
514 909 5203 թիւին:

ՀԻՒԱՆԴԱԵՐՈՒԷՆ ԱՅԾԵԼՈՒԹԻՒՆ

Բարեհաճեցէք հեռաձայնել
Արժ. Տ. Գառնիկ
Ա. Քհնյ. Գոյունեանի.
514 909 5203 թիւին:

**ԱՅԾԵԼԵՅԷ՛Ք ԵԿԵՂԵՑԻՈՅԱ
ԿԱՅՔԷՁՈՒ.**

www.sourphagop.net

**ԹԵՐԹԻԿԻ ԱՆՍՈՐԴ ԹԻԷՐՈՒ
ԿՐԱՔ ԳՏԱԵԼ
www.sourphagop.net
ԿԱՅՔԷՁԻՆ ԿՐԱՅ**

**ՀՈԳԵՀԱՆԳԱՏԵԱՆ
ՁԵՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԵՐՈՒ
ԱՆՍՕՐՕՔ ԿԱՏԱՐԵՅԷՔ ԿՐՊՈՒԵԼՈՎ
ԵԿԵՂԵՑԻՈՅ ԴԻՒԱՆԱՏՈՒՆ:**